



Տարեկան հաշվետվություն 2020

Կազմակերպության մասին

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության նպատակն է հասարակության իրազեկումը և հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, հանրության մասնակցության խթանումը հանրային նշանակություն ունեցող ոլորտներում և որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների ու բարեփոխումների առաջմղումը: Մեր համոզմամբ՝ պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» հետազոտություններն ու հրապարակումները վերաբերում են արտաքին քաղաքականությանն ու դրան առնչվող հարցերին, ժողովրդավարական արժեքներին, տնտեսությանը, անվտանգության ոլորտին, ընտրություններին, բարեփոխումներին, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին:

Կազմակերպությունն աշխատանքներ է ձեռնարկում ուղղված Հայաստանում լրագրողական դաշտի ունակությունների բարձրացմանը, ինչպես նաև իրականացնում է լրատվական գործունեություն՝ ապատեղեկատվության դեմ պայքարող «Փաստերի ստուգման հարթակի» միջոցով:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» իր գործընկերների հետ միասին ակտիվորեն ներգրավված է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման գործընթացին՝ թե՛ դիտորդական առաքելության և թե՛ դրան նախորդող գործընթացների վրա ազդեցության միջոցով:

Կազմակերպությունն իր ակտիվ մասնակցությունն է ունենում մի շարք ժողովրդավարական բարեփոխումների առաջմղմանը, հանրության շրջանում դրանց պահանջի ձևավորմանը և փաստաթղթերի նախագծմանը:

Մենք չենք ներկայացնում որևէ քաղաքական կուսակցության կամ այլ խմբի շահեր:

Բովանդակություն

- Անձնակազմ
- Գործընկերներ
- Գործունեություն
- Ֆինանսավորում

Աշխատակիցներ



Դանիել Բոաննիսյան
ծրագրերի համակարգող



Աշխեն Մուշեղյան
գործադիր տնօրեն



Փիրուզա Պետրոսյան
գործադիր օգնական



Տաթևիկ Թադևոսյան
գործադիր օգնական



Արտաշես Սերգոյան
հետազոտող



Վաղարշ Աղաբեկյան
իրավապահ համակարգի
փորձագետ



Էդգար Հակոբյան
իրավաբան



Փայլակ Կարապետյան
հաշվապահ



Անի Գրիգորյան
գլխավոր խմբագիր



Նելլի Լազարյան
լրագրող



Սետա Ղազարյան
լրագրող



Հովհաննես Նազարեթյան
լրագրող



Անի Ավետիսյան
լրագրող



Լուսինե Ռսկանյան
լրագրող



Շուշան Վրացյան
սոցիալական մեդիա
մարկետոլոգ



Մանեն Գևորգյան
սոցիալական մեդիա
մարկետոլոգ



Մանեն Մարտիրյան
թվային մարկետինգի
մասնագետ



Վահեն Ղուկասյան
խմբագիր



Վիկտորյա Անդրեասյան
ծրագրի օգնական



Շուշան Հարությունյան
թարգմանիչ



Քրիստինե Գորոյան
թարգմանիչ



Խորեն Գրիգորյան
վիդեոմոնտաժող,
օպերատոր



Արուսիկ Ռսկանյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Նանե Մանասյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Շուշան Ստեփանյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Արշալույս Բադալյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Սոնա Մկրտչյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ

«Փաստերի ստուգման հարթակի» գործունեությունը



փաստերի ստուգման հարթակ fact investigation platform

2020 թվականին «Փաստերի ստուգման հարթակը» շարունակեց իր գործունեությունը՝ պայքարելով ապատեղեկատվության, կեղծ ու մանիպուլյատիվ տեղեկությունների դեմ:

Ընդլայնվեց հարթակի գործունեության շրջանակը, որին զուգընթաց կատարվեցին փոփոխություններ կայքն առավել ինտերակտիվ և ընթերցողի համար դյուրամատչելի դարձնելու ուղղությամբ: Կայքում ներդրվեց նյութերը գնահատելու հատուկ համակարգ, որը համապատասխանում է փաստերի ստուգման միջազգային չափանիշներին: Հարթակը գործուն քայլեր է ծավալել նաև հետաքննական լրագրության ուղղությամբ՝ հրապարակելով տասնյակ հետաքննություններ, որոնք մեծ արձագանք են ստացել հանրության շրջանում: «Փաստերի ստուգման հարթակի» գործունեության շնորհիվ բացահայտվել են իրենց ունեցվածքի վերաբերյալ պաշտոնյաների կողմից ներկայացված կեղծ հայտարարագրերը, որոնց հիման վրա իրականացվել են մի շարք հետաքննություններ: FIP.am-ի հրապարակումների հիման վրա հարուցվել են քրեական գործեր և պաշտոնյաների նկատմամբ կիրառվել են տարբեր վարչական տույժեր, ինչպես նաև տարբեր պաշտոնյաներ հանդես են եկել պարզաբանումներով:

Եականորեն ավելացել է հարթակի ճանաչելիությունը հանրության շրջանում, ինչի մասին վկայում են օգտատերերի

կողմից պարբերաբար ստացվող բազմաթիվ նամակները՝ փաստերը ստուգելու կամ տեղեկատվությունը ճշտելու վերաբերյալ:

«Փաստերի ստուգման հարթակի» հրապարակումներն արտատպվել և վերահրապարակվել են տարբեր լրատվական կայքերի կողմից, իսկ թիմի անդամները մասնակցել են տարբեր հաղորդումների և իրենց կատարած հետաքննությունների վերաբերյալ մեկնաբանություններ տվել տարբեր լրատվամիջոցների:

Հակազդեցություն համավարակին

Կազմակերպությունը «Բաց տեղեկատվության համագործակցություն» (անգլ.՝ Open Information Partnership) ցանցի աջակցությամբ իրականացրել է «Հակազդեցություն COVID-19-ին առնչվող ապատեղեկատվությանը, մանիպուլյացիաներին և դավադրության տեսություններին» ծրագիրը, որի շրջանակներում «Փաստերի ստուգման հարթակ» անդրադարձել է համավարակի ընթացքում լայն տարածում գտած ապատեղեկատվությանը՝ կանխարգելիչ միջոցառումների, թեստերի, պետության կողմից կիրառվող սահմանափակումների շուրջ, ինչպես նաև ակտիվորեն տարածվող դավադրության տեսություններին և շահարկումներին: Թիմի երկու լրագրողներ նաև համապատասխան վերապատրաստում են անցել՝ COVID-19-ի շուրջ ապատեղեկատվությանը առավել արդյունավետ հակազդելու նպատակով:



Լրատվական դաշտի մշտադիտարկում

Կազմակերպությունն ամփոփել է 2020 թ.-ի առաջին և երկրորդ եռամսյակներում հայկական մեդիադաշտի քաղաքական իրադարձությունների շուրջ տարածված մանիպուլյացիաները և քարոզչական թեզերը: Կազմվել են եռամսյակային զեկույցներ՝ 2020 թ.-ի հունվար-մարտ և ապրիլ-հունիս ընկած ժամանակահատվածների համար: Չեկույցները կազմվել են նշված ժամանակահատվածում սոցիալական մեդիայի, առցանց լրատվամիջոցների, տպագիր մամուլի և հեռուստաալիքների YouTube ալիքների մշտադիտարկման հիման վրա:



Չեկույցներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝

<https://uic.am/10341>

<https://uic.am/10565>

Հանրային քննարկումներ

Տարեսկզբին կազմակերպվեց «Գազի գնադրյացումը և սակագինը. ինչպե՞ս կավարտվեն ՌԴ-ի հետ բանակցությունները» խորագրով հանրային քննարկումը, որի ընթացքում քննարկվեցին «Գազարոմ էքսպորտ» ՍՊԸ-ի և «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագիրը, Իրանից Հայաստան գազի ներկրման ծավալների ավելացումը և Հայաստանի տարածքով՝ փոխհոսքերի եղանակով գազի տարանցում կազմակերպելու հեռանկարները, ինչպես նաև այլ հարակից հարցեր:



Փետրվար ամսին կազմակերպվեց Հակակոռուպցիոն կոմիտե ստեղծելու վերաբերյալ օրենքի Նախագծի շուրջ հանրային քննարկում, որի ընթացքում քննարկվեցին Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման Նպատակները, գործառույթները և այս մարմնի առջև ծառացած խնդիրները: Նախագծի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն կազմված է լինելու կենտրոնական և տարածքային մարմիններից: Տարածքային մարմինները ձևավորվելու են աստիճանաբար: Կենտրոնական մարմինը կազմված է լինելու օպերատիվ-հետախուզական գործունեության, քննչական և ներքին անվտանգության վարչություններից, ինչպես նաև



միջազգային համագործակցության, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական, վերապատրաստման ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժիններից:

Փետրվար ամսին կայացավ նաև «Ոստիկանության բարեփոխումները» թեմայով հանրային քննարկումը, որի ընթացքում քննարկվեց ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թթ. ռազմավարությունը, որի համաձայն՝ Արդարադատության նախարարության կողմից առաջարկվում է ստեղծել Ներքին գործերի

նախարարություն, անցում կատարել Պարեկային ծառայության, ինչպես նաև ամբողջական կամ որոշ տեսակի գործերի դեպքում ոստիկանությանը նախնական քննություն իրականացնելու գործառույթ վերապահել:

Գարնանը կազմակերպվեց «Օտարերկրյա հեռուստաալիքները և հայկական մոլտիպլեքսը» թեմայով հանրային քննարկումը, որի ընթացքում քննարկվեց ՀՀ պետական թվային մոլտիպլեքսով օտարերկրյա հեռուստաալիքների հեռարձակման հնարավոր արգելքի մասին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի հայտարարությունը, ըստ որի՝ Հայաստանը գրեթե միակ երկիրն է, որը թույլ է տվել օտարերկրյա հեռարձակողներին մտնել պետական մոլտիպլեքս: Պատճառները տարբեր են՝ քաղաքական, տեխնիկական, գաղափարական և լեզվային:





Ամռանը կայացավ ոստիկանության Պարեկային ծառայության թեմայով հանրային քննարկումը: Ոստիկանության բարեփոխումների շրջանակում Պարեկապահակակետային ծառայությունների և ճանապարհային ոստիկանության փոխարեն ներդրվում է Պարեկային ծառայությունը: Այն նախատեսվում է ներդնել երկու փուլով: Առաջին փուլով մինչև 2021 թվականի առաջին եռամսյակը՝ նոր ծառայությունը գործարկվելու է Երևանում, այնուհետև ամբողջ հանրապետությունում՝ մինչև 2022 թվականի առաջին եռամսյակը:

Հուլիս ամսին քննարկվեց Ազգային անվտանգության ռազմավարությունը, որը որպես գլխավոր նպատակ հռչակում է Հայաստանի և ՀՀ քաղաքացիների անվտանգ և առաջանցիկ զարգացման ու բարեկեցության ապահովման համար ուղենիշների սահմանումը:





Կազմակերպեցինք նաև «Բարձրագույն դատական ատյանները սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում» հանրային քննարկումը: Այս բարեփոխման նպատակը, համաձայն մասնագիտական հանձնաժողովի կողմ քվեարկած անդամների կարծիքի, դատական համակարգի արդյունավետության և հանրային վստահության բարձրացումն է և դատավորների, դատարանների անկախության ապահովումը, ինչպես նաև իրավաբանական կրթության բարեփոխումը: Քննարկման ընթացքում հանգամանորեն անդրադարձ եղավ նաև Գերագույն դատարանի ստեղծման գաղափարին և դրա հիմնավորումներին:

Սեպտեմբերին կայացավ «Նախընտրական քարոզարշավների և կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության խնդիրները» թեմայով հանրային քննարկումը: Ընտրական օրենսգրքի և «Կուսակցությունների մասին օրենքի» ընթացիկ բարեփոխումներով առաջարկվում է փոփոխություններ մտցնել նախընտրական քարոզարշավների և քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության բարձրացման ընթացակարգերում:





Տարեվերջին ունեցանք ևս մեկ քննարկում՝ «Ինչ նախապայմաններ են պետք որակյալ ընտրությունների համար» թեմայով, որի ընթացքում քննարկվեցին խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերի ներգրավվածությամբ խորհրդակցությունների անցկացումը, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ փոփոխությունները և այլ հարցեր:

Այս և մյուս քննարկումներին մասնակցում էին ոլորտի դերակատարները և պատասխանատուները, պատգամավորներ, փորձագետներ, քաղիասարակության ներկայացուցիչներ:

Ընտրություններ



«Իրազեկ քաղաքացիների միավորումը» «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակի» հետ համատեղ իրականացրեց դիտորդական առաքելություն Արցախի Հանրապետության Նախագահական և ԱԺ ընտրությունների քվեարկությունների օրերին՝ մարտի 31-ին կայացած առաջին և ապրիլի 14-ին կայացած երկրորդ փուլի ընթացքում:

Արցախի Հանրապետությունում ձևավորել էր 282 ընտրական տեղամաս: ԻԶՄ-ի կողմից դիտարկվեց 49 ընտրական տեղամաս Արցախում, մեկ տեղամաս Երևանում: Դիտարկումներն իրականացվել են բոլոր 8 տարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչպես նաև դիտորդություն են արել առաքելության 10

շրջիկ խմբերը: Թե՛ Նախընտրական փուլում և թե՛ քվեարկության օրը իրականացվել է մեդիա մոնիթորինգ և իրավապահ համակարգի գործունեության դիտարկում: Առաքելության մեջ ներգրավված են եղել 113 կարճաժամկետ դիտորդ, 5 իրավաբան, 9 հեռախոսավար-մուտքագրող և մոտ 25 վարչական աշխատող:

Քվեարկության արդյունքների համաձայն՝ կարելի է ասել, որ Արցախի համապետական ընտրություններն անցել են մրցակցային պայմաններում, սակայն այդ մրցակցության արդարության չափը Էապես տարբերվում էր ժողովրդավարական հասարակություններում ընտրություններին ներկայացվող պահանջներից:



Ընտրությունների թե՛ նախընտրական ժամանակահատվածում, թե՛ առաջին և երկրորդ փուլում եղել են խախտումներ, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ թե՛ Ազգային ժողովի և թե՛ հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքների վրա:

Թեպետ ընտրությունների թափանցիկության ապահովման ուղղությամբ Արցախի Հանրապետության իշխանություններն իրականացրել էին էական ջանքեր, սակայն առերևույթ էր ընտրախախտումների դեմ պայքարի (դրանց նախականիման ու բացահայտման) քաղաքական կամքի դեֆիցիտը:

Արցախի Հանրապետության ընտրական օրենսդրությունը, համակարգը և վարչարարությունը էական բարեփոխման կարիք ունեն: Տեղամասերից տեսահեռարձակման և տեղամասերը թեքահարթակներով կահավորման ողջունելի պրակտիկան պետք է զարգացվի:

Արցախի համապետական ընտրությունների դիտարկման գեկույցին կարելի է ծանոթանալ [այստեղ](#):

Բարեփոխումներ

Ոստիկանություն

2020 թ.-ին հանրությանը ներկայացվեց ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. ծրագիրը, որը հաստատվեց նույն թվականի ապրիլին: Կազմակերպությունն ունեցել է իր ակտիվ մասնակցությունը տվյալ ռազմավարության մշակման գործում:

Կազմակերպությունը, ի դեմս Դանիել Իոաննիսյանի, ներգրավվել է Ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդի կազմում, որը զբաղվում է ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված գործողությունների համակարգման աշխատանքներով:

2020 թ.-ի հունիսին Երևանում գործարկվեցին ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված Պարեկային ծառայությունը և Օպերատիվ կառավարման կենտրոնը: Կազմակերպությունը ներգրավված է եղել նաև պարեկային ծառայողների ընդունող և հարցազրույցների հանձնաժողովներում:

Սահմանադրական

2020 թ.-ի փետրվարի 12-ին վարչապետի որոշմամբ ստեղծվեց Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը, որը կազմված է ինչպես պետական պաշտոնյաներից, ներառյալ՝ մեկական ներկայացուցիչ ԱԺ խմբակցություններից,



այնպես էլ իրավաբան-գիտնականներից և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, մասնավորապես՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ և իրավաբանների հայկական ասոցիացիա:

Հանձնաժողովի գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարությամբ նախանշված սահմանադրական փոփոխությունների իրագործմանը: Սակայն հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ քննարկվել են նաև ռազմավարությամբ չնախատեսված այլ հարցեր:

Սակայն 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով և դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում ստեղծված քաղաքական լարվածության պատճառով Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքները փաստացի կասեցվեցին:

Ընտրական

2020 թ. մայիսին Ազգային ժողովն ընդունեց «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթը, որը հիմնականում վերաբերում է ՏԻՄ ընտրություններին, իսկ օգոստոսին արդեն Ազգային ժողովի ընտրական բարեփոխումների աշխատանքային խումբն առցանց ձևաչափով սկսեց Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի հանրային քննարկումները:



«Իրազեկ քաղաքացիների միավորումն» իր մասնակցությունն է ունեցել վերոնշյալ փաթեթի մշակման գործընթացում, ինչպես նաև ի դեմս կազմակերպության ներկայացուցիչ Արտաշես Սերգոյանի անդամակցել է ընտրական բարեփոխումների ԱԺ աշխատանքային խմբին, որը գործել է 2020 թ.-ի մայիս ամսից: Խմբին են ներկայացվել մի շարք առաջարկներ, և կազմվել է ընտրողների ցուցակների հետ կապված փոփոխության հայեցակարգային առաջարկությունը: Քանի որ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» միակն է, որ ներգրավված էր թե՛ ընտրական, թե՛ սահմանադրական բարեփոխումներում, կազմակերպությունը նաև փորձել է որոշակի կամուրջ հանդիսանալ այդ երկու մարմինների միջև:

Դատաիրավական



Դատաիրավական բարեփոխումների շրջանակներում ստեղծված դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովում «Իրազեկ քաղաքացիների միավորումը» առաջադրել էր իրավաբան-գիտնական Անահիտ Մանասյանի թեկնածությունը, որը 2020 թվականի հուլիս ամսին ընտրվել է այդ պաշտոնում դատավորների ընդհանուր ժողովի կողմից:

Կազմակերպությունը նաև ԲՀՀ աջակցությամբ իրականացրեց «Հայաստան-ԵՄ համապարփակ և

ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հաշվետու կատարման ապահովում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվեց Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ստանձնված պարտավորությունների իրականացման մշտադիտարկում: Մասնավորապես, կատարվեց ոլորտային



բարեփոխումների կիրարկման ճանապարհային քարտեզի մշտադիտարկում (ոստիկանություն, ընտրական, սահմանադրական, հակակոռուպցիոն):

ԱՄՆ Պետքարտուղարության հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում մեկնարկեց «Բարեփոխումների թափանցիկության բարձրացում հանրության ներգրավվածության միջոցով» ծրագիրը, որի նպատակն է հասարակությանը հանրամատչելի կերպով ներկայացնել բարեփոխումների գործընթացը պետական կառավարման տարբեր ոլորտներում:



Հաճախ բարեփոխումները գրված են լինում երկարաշունչ ու բարդ փաստաթղթերում, տարատեսակ օրենքներում ու նախագծերում, որոնցից գլուխ հանելը խորը մասնագիտական հմտություններ է պահանջում: Այս ծրագիրը միտված է այս խնդիրը լուծելու Reforms.am կայքի միջոցով, որը նախատեսված կլինի հետաքրքրված քաղաքացիների ու լրագրողների համար:

Լրագրողների ուսուցում

=		Ինչպես ինքնուրույն ստուգել փաստերը համացանցում Իրազեկ քաղաքացիների միավորում 4:18
=		Ինչպես տեղեկատվություն ստանալ պետական մարմիններից, եթե դուք լրագրող չեք Իրազեկ քաղաքացիների միավորում 3:49
=		Ինչպես ճիշտ վիզուալիզացնել տվյալները Իրազեկ քաղաքացիների միավորում 4:21
=		Ինչպես հետևել, թե ինչպես են ծախսվում բյուջեի միջոցները Իրազեկ քաղաքացիների միավորում 3:25
=		Ինչպես ստուգել պաշտոնյաների կապն օֆշորային ընկերությունների հետ Իրազեկ քաղաքացիների միավորում 2:59

ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Watchdog լրագրության խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից պատրաստվել է ևս 5 տեսադաս՝ փաստերի ստուգման գործիքների վերաբերյալ: Ծրագրի նպատակն է Հայաստանում watchdog լրագրության զարգացման միջոցով նպաստել կառավարման մարմինների նկատմամբ հանրային վերահսկողության բարձրացմանը: Այս ծրագրի հիմնական շահառուներն են լրագրողները, ուսանողները և ակտիվ քաղաքացիները:

Սեպտեմբերի 26-27-ին «Իրազեկ քաղաքացիների միավորումը» գործող լրագրողների համար կազմակերպել էր «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում. ԵՄ-Հայաստան, ԵԽ-Հայաստան հարաբերությունները» խորագրով երկօրյա սեմինար-քննարկումը:

Միջոցառմանը ղեկույցով հանդես եկան «Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ նախագահ, Արևելյան գործընկերության ԶՀՖ ազգային պլատֆորմի համակարգող Լուսինե Հակոբյանը, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը, ինչպես նաև ԱԳՆ Եվրոպայի վարչության Եվրոպայի խորհրդի բաժնի վարիչ Նարինե Նիկոլյանը և ԱԳՆ Եվրոպայի վարչության պետ Տիգրան Սամվելյանը:

Ցավոք, սեպտեմբերի 27-ի առավոտյան Արցախի
Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած
պատերազմի պատճառով միջոցառումն ընդհատվեց, ինչի
հետևանքով չեղարկվեցին միջոցառման երկրորդ մասում
նախատեսված ելույթները և քննարկումները:



Պատերազմ

Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում կազմակերպությունն աշխատեց արտակարգ ռեժիմով, լրագրողները նաև մեկնեցին Արցախ՝ տեղում լուսաբանելու, ինչպես նաև փաստեր հավաքելու Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական հանցագործությունների մասին, որոնք ակտիվորեն ներկայացվում էին միջազգային հանրությանը: Հավաքվել են փաստեր կասետային զինատեսակների օգտագործման, քաղաքացիական անձանց և ենթակառուցվածքների, ինչպես նաև լրագրողների թիրախավորման վերաբերյալ:



Հավաքագրված փաստերը տեղ գտան նաև Human Rights Watch-ի հրապարակումներում, որոնց կարող եք ծանոթանալ ստորև.

- [Azerbaijan: Cluster Munitions Used in Nagorno-Karabakh](#)
- [Technical Briefing Note. Cluster Munition Use in the Karabakh Conflict](#)

Այս ծանր օրերին կազմակերպությունը «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության աջակցությամբ ձեռք բերեց զրահաբաճկոններ և սաղավարտներ՝ պատերազմը լուսաբանող լրագրողների համար:

Եկամուտների և ծախսերի հաշվետվություն

N	2020թ. ֆինանսական միջոցները՝ ըստ դոնորների		USD
1	ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամ, Նյու-Յորք	Բալանս	25430
		Եկամուտ	0
2	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	Բալանս	3892
		Եկամուտ	13429
3	Մուլտիմեդիա կրթության կենտրոն, Թբիլիսի	Բալանս	0
		Եկամուտ	800
4	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Վաշինգտոն	Բալանս	38610
		Եկամուտ	103000
5	Բաց տեղեկատվության համագործակցություն, Լոնդոն	Բալանս	0
		Եկամուտ	6033
6	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	20349
		Եկամուտ	108700
7	Բաց տեղեկատվության համագործակցություն, Լոնդոն	Բալանս	0
		Եկամուտ	9987
8	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, Երևան	Բալանս	0
		Եկամուտ	25865
9	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	0
		Եկամուտ	5500
10	Լրագրողներ առանց սահմանների, Փարիզ	Բալանս	0
		Եկամուտ	6421
11	Ազատության տուն, Վաշինգտոն	Բալանս	0
		Եկամուտ	27976
12	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	Բալանս	0
		Եկամուտ	18139
			414131

N	2020թ. ծախսերը՝ ըստ իրականացված ծրագրերի		USD
1	Watchdog լրագրության խթանումը Հայաստանում	Ծախսեր	22796
2	Աջակցություն փաստերի ստուգման և մեդիա մոնիտորինգի կարողությունների զարգացմանը	Ծախսեր	17321
3	«Fake Detector» թեմայով մուլտիմեդիա արտադրանքի համատեղ արտադրություն	Ծախսեր	800
4	Արտաքին քաղաքականության և ժողովրդավարական բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում	Ծախսեր	134631
5	Հակազդեցություն COVID-19-ին առնչվող ապատեղեկատվությանը, մանիպուլյացիաներին և դավադրության տեսություններին	Ծախսեր	6033
6	Հանրային նշանակության հարցերի փաստահեն ընկալման զարգացում՝ ապատեղեկատվություններին և մանիպուլյացիաներին հակազդելու միջոցով	Ծախսեր	124060
7	Չարամիտ տեղեկատվական գործողությունների բացահայտում Հայաստանում՝ ԻԲՄ-ի հետաքննական կարողությունների զարգացման միջոցով	Ծախսեր	8070
8	Բարեփոխումների թափանցիկության բարձրացում հանրության ներգրավվածության միջոցով	Ծախսեր	5341
9	Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հաշվետու կատարման ապահովում	Ծախսեր	1127
10	Աջակցություն հայաստանցի լրագրողներին զրահաբաճկոններով և սաղավարտներով ապահովմանը	Ծախսեր	6421
11	Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում	Ծախսեր	2936
12	Փաստահեն տեղեկատվության խթանում՝ լրագրողական հետաքննությունների միջոցով	Ծախսեր	158
			329695